ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

22.05.2024թ N 02/16.4/7462-2024

<<ՍՈՒՐԳԵՎ>> սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
տիկին Մարիաննա ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ ar-adamyan@rambler.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Սանթրոսյան,

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ՍՈՒՐԳԵՎ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հոկտեմբերի 28-ին կնքվել է ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի, գ. Բերդաշենի, գ. Կապսի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-1 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2024 թվականի մայիսի 20-ի N Ն/27.1/4081-2024 զեկուցագիրը և պայմանագրի 2.1.3 կետի ա) պարբերությունը՝ Պատվիրատուն 2024 թվականի մայիսի 22-ից Պայմանագիրը ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման մասով մասնակի միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2024 թվականի մայիսի 22-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն

Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900008000664 հաշվեհամարին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի ապահովման 2 991 412 (երկու միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար չորս հարյուր տասներկու) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 8 974 235 (ութ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հարգանքով՝

Պարտականությունները կատարող

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2024-05-22 17:28:46 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722